

Գրքի XIX եւ XXI Գլուխները նուիրում է Հայաստանի կացութեան: Ես յառաջ կը բերեմ միայն այն Գլուխն, որ տեղ խօսում է Փոքր Հայքի Կիլիկիայի մասին, որովհետեւ սա միայն կապ ունի մեր պատմութեան հետ:

«Ճիշդ է, որ երկու Հայաստան գոյութիւն ունի, Մեծ եւ Փոքր: Փոքր Հայաստանի (Կիլիկիան է ակնարկում) քաղաքը իր երկիրը կառավարում է արդարութեամբ: Նա ենթարկում է թաթարներին: Ծատ քաղաքներ եւ գրեականներ կան այնտեղ եւ ամէն բանի մեծ առատութիւն է տիրում: Այս երկիրը շատ յարմար է վայրենի անասունների եւ թռչունների որսորդութեան համար: Բայց ձեզ այն էլ ասեմ, որ երկիրը առողջապահական վայր է: Հին ժամանակ այս երկրի ազնուականները նշանաւոր էին իրենց զինուորական գործերովը եւ քաջութեամբը: Բայց հիմայ ողորմելի են եւ վատագի (vil) . ամենեւին քաջարտութիւն չունին. լաւ խմորներ են միայն: Ծովեզերքում մի քաղաք կայ, որ Լայաս (Layas) է կոչւում, որ մեծ առեւտրի տեղ է: Իմացէք, որ բոլոր համեմները, ասուեղէնները, ոսկեղէն իրերն եւ ուրիշ ապրանքներ բերում են այստեղ ներսերից. իսկ Վենետիկի, Ջենովայի եւ ուրիշ երկիրների վաճառականներ գալիս են, ծախում են իրենց բերած ապրանքներն եւ գնում, տանում են ինչ որ իրենց պէտք է: Ով որ ուզէ երկրի ներսերը գնալ, վաճառական թէ ուրիշ ուղեւոր պէտք է որ այս քաղաքից անցնի» (էջ 33) 8:

Հետաքրքրական է այս երկար ուղեւորութեան վախճանը: Մարկո Պոլո տասնեակ տարիներ վերջը դարձեալ եկել է Այս այս անգամ այնտեղ կուտելու համար: Այս դէպքը հետեւեալ կերպով է նկարագրուած նրա գրքում: Մարկո Պոլո 26 տարի Արեւելքում ճանապարհորդելուց յետոյ, վերադարձել էր Վենետիկ այնպիսի հազուատուով, դէմքով եւ նոյն իսկ խօսուածքով, որ իր հայրենակիցները չեն ճանաչել նրան: Բոլորն էլ նրան մեռած էին կարծում եւ նոյն իսկ նրա հօրենական տունն անցել էր ուրիշ ժառանգների ձեռքը: Ծատ ժամանակ է հարկ եղել, մինչեւ որ ամէն ինչ կարգի մտնէ: Վենետիկցիք երբ տեսել են թէ Մարկոն, իր հայրն ու հօրեղ-

բայրը մեծ քանակութեամբ դոհարեղէն են բերել Արեւելքից, իրենց հազուատուողէնի մէջ կարուած, նրանց տրամադրութիւնն էլ փոխուել է...: Մարկոն այնուհետեւ կոչուել է Marco Millioni:

Այն դարերում, Վենետիկի եւ Ջենովայի հասարակապետութիւնները շարունակ մրցման մէջ էին, եւ ամէն կերպ աշխատում էին իրար միջոցաւ, մանաւանդ նաւագնացութեան եւ միջադպրոցի առեւտրի մէջ: Մարկոյի դարձից քիչ վերջը Ջենովացիների նաւատորմի ղեկավար Պոլոն ծովեզերքի վրայ սկսել է սպառնալ Վենետիկցիներին: Վենետիկի հասարակապետութիւնն էլ իր կողմից ռազմական եւ պատրաստել, նրանց դիմադրելու համար: Մարկոյի մէջ զարթել է հայրենասիրական սղին եւ նա իր սեպհական ռազմանաւով միանում է Վենետիկեան նաւատորմի ղեկին, Ջենովացիների դէմ կուտելու համար: Երկու թշնամի նաւատորմիները բաց ծովում միմեանց հալածելով վերջ ի վերջոյ երկուսն էլ գալիս են... Այս եւ հայկական նաւահանգիստը 1296ին նաւային մեծ պատերազմի գալա է հանդիսանում: Յաղթանակը մնում է Ջենովացիներին, որոնք 25 Վենետիկեան նաւ կործանում եւ գերում են, որոնց մէջ էլ ինչու ինչու Մարկոյի սեպհական նաւը: Մեր համբաււոր ճանապարհորդն ինքն էլ գերի է ընկնում: Ջենովացիները բերում են նրան Ջենովա եւ բանտարկում: Մարկո Պոլոյի անունն արդէն այնքան տարածուած էր Եւրոպայում, որ երկու տարի շարունակ ամէն կողմից գալիս այցելում են նրան իր բանտում, որ նրա բերանից լսեն իր անօրինակ ուղեւորութեան արկածները: Այդ պատճառով, այն էլ միւսերոյն բանը անդադար չկրկնելու համար, Մարկո որոշել է թեւադրել եւ գրել տալ իր ճանապարհորդութիւնը: Պիղայի ոմն Բիւստիսիէն, գրի է առել, որից յետոյ ուրիշներն ընդօրինակելով տարածել են: Այդ սկզբնական բնագրի վերնագիրն է եղել՝ Livres des diversités et merveilles du monde:

Մարկո Պոլո 4 տարի բանտում մնալուց յետոյ, վերջապէս շնորհիւ իր մեծ համբաւին

8 Հեթում պատմիչ՝ Այասի առջև սյուպիսի մի նաւային պատերազմի նկարագրութիւնն է տալիս, որ տեղի է ունեցել 2 Յունիս 1293ին: Ջենովացիները 12 ռազմանաւով (Galere) յարձակուել են վենետիկցիների 32 նաւերի վրայ որոնց 24ը գերի են վերցրել: Այս պատմութեան վրէժը լուծելու համար վենետիկցիներն էլ մի քանի տարի վերջը Ջենովացիների դրասնեակներն են կործանել:

8 Ուշագրութեան արժանի են օտար, անկողմնակալ ականաւետի այս տողերը (ստորագրումը մերն է), հայ երկրի եւ ազնուականների այն ժամանակի կացութեան եւ բարքերի մասին:

աղատուում է եւ դառնում Վենետիկ, ուր եւ վախճանում է 1324ին (էջ 29—30):

Պատմագիրները բացի իր բազմակողմանի, ճշգրիտ եւ սրամիտ նկարագրութիւններից մի ուրիշ մեծ արդիւնք են վերագրում Մարկո Պոլոյին, այն է որ նա՝ շնորհիւ թաթար խանի վրայ ունեցած ազդեցութեան կարողացել է համոզել, որ սա չմիանայ մասմեւտական Մարակինոսներին ինչպիսիքների դէմ, որ եթէ պատահէր, անշուշտ մեծապէս պիտի դժուարացնէր այն վերջինների գործունէութիւնը Ս. Երկրում եւ շրջակայքում:

Ռուբինեանների անկումից յետոյ Այասն էլ կորցրեց իր գոյութեան իրաւունքը: Առուտուրը եւ նաւագնացութիւնը տեղափոխուեցան խորշի միւս եզերքն, Ալեքսանդրէտ: Այսու դարձաւ մի խեղճուկ աննշան դեղ, ճահճային վայրում, Ջիհոն դետի բերանի վրայ, Դէօրա Եօլի մօտ:

(Շարունակելի:)

ՍԱՐՈՒՆՍՆ



ՍԻՄԷՈՆ ԳՊՐԻ ԼԵՀՇՅԻՈՅ
ՌԻՉԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՌԻՉԵՒՐՈՒԹԵԱՆ Ի ԼՎՈՎԵ Ի Կ. ՊՈՒԻՍ, Ի ՀՌՈՄ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ ՅԱՄՆ 1608—1619

(Շարունակութիւն:)

12. ԵՐՈՒՍԱԼԵՄ

ԺԱՄԱՆՈՒՄՆ

Անտի տվի դձիւ աղքատի մի ծերունի: Եւ ես մինչ ի քաղաքն հետիոտս գնացի: Կայ սահմանք զի յորժամ մերձ լինին սրբոյ Երուսաղէմայ ուխտաւորքն՝ առաջնորդն մարդիկ ուղէ դէմ նոցա. թէ կան եպիսկոպոսք, վարդապետք՝ եւ նա ուղէ եպիսկոպոսք եւ վարդապետք. եւ թէ միայն քահանայք եւ աշխարհականք են, առաքէ դմեծ թարձիմանն եւ քահանայք դէմ նոցա: Իսկ ամենայն ուխտ եկեղեցւոյն դարդարին եւ զգետաւորին՝ եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք. եւ ամբարձարք եւ խաչալամով, ինկոք եւ մոմե-

4 մարդիք: — 8 դարձիման: — 10 եպիսկոպոս:

ղինօք դէմ գնան: Եւ որչափ քահանայ կայ եւ կարգաւոր՝ ամէնին շուրջառ տան եւ շապիկ. 15 եւ մտանեն քաղաքն շարականաւ ցնծութեամբ եւ երգովք հոգեւորօք. եւ իրբեւ գան ի դուռն եկեղեցոյն՝ գնայ ընդ առաջ պատրիարքն եւ մուծանէ գնոսս յեկեղեցին. եւ երկրպագեալ անդ սեղանոյն՝ ապա զաջն ողջունեն առաջ- 20 նորդին: Եւ նա բաժանէ նոցա զօթեւանս ըստ պատշաճի, ոմանց առանձին մի օտայ տայ եւ այլոցն երկու-իրեքին մի: Նոյնպէս եւ զբաստիցն:

Ս. ՅԱՎՈՒՐ

Եւ կայ ի Ս ու ը բ ն Յ ա կ ո բ Յ Կ Ն տուն 25 վիմաչէն եւ քարուկիր: Եւ զտտ աւազ Եկեղեցուն երկու փոքր եկեղեցի ալ՝ Ս ու ը բ թ ո ը ո ս եւ Ս ու ը բ Ա ո ա ք ե ա լ: Ունի երկու մեծ ախոռ, որ հաղարական ձի կու մէկին. իրեք պաղչայ՝ ջաղացքն մէջ ձիու: 30 Եւ առաջնորդին օթեւանքն եւ նստատեղն մեծ եւ բազում. մուտպախն, հացտունն, մառանն: Հարեղայից թաղն երկու տակ է տներն՝ ներքնատուն եւ վերնատուն: Ունի քառսուն հորջրի. եւ բոլորն շուրջանակի քարէ պարիսպք, 35 բարձր եւ լայն. եւ մեծ դուռ երկաթի որպէս քաղքի. եւ դռան վերեւ երեքյարկեան դարպաս, կաթողիկոսարան: Եւ ամէն փողոց անուն մի ունի:

Զոր մեծ կարգ եւ սահման տեսի ես յայն- 40 ժամ անդ, ժամն եւ արտաքս: Զի ունէր ժեհ հարեղայ, որ ամէն օր անխափան ամենայն եկեղեցիս ժամ կ'առնեն. երկու վարդապետ, իրեք եպիսկոպոս, լաւ վարպետ մի ժամասաց: Ունէր խարիճիք, որ ցորեկն նստէին եւ 45 դիւերն փակէին, բանալին Պարոնտէրի տային. էթմէքէիք, աչիք, ջաղցպանք, եաղըճիք, մոմճիք, երկու քիւրչի, մտպախչի, թէրգիք, ոսկէրիչ, թէպէհչիք, անտեսք՝ միմն զինոյն վրայ եւ մին կերակրոյն: Ունէր եւ ժո- 50 զորս առաքէր օտար քաղաքն Հայոց. երկու լուսարար, վեց թարձիման: Զոր անխափան կատարէր ժամակարգութիւն, սաղմոս եւ երգ եւ պատարագ. զի ամէն օր մէջ դիւերի 55 յառնէին եւ այնպէս տքնութեամբ հակէին յերկոյց մինչեւ ի լոյս. ամէն օր ութ կանոն՝ ամենայն քահանայ. եւ բոլոր տարին չորսպաք. երկու օրն անգամ մի ճաշակէին եւ զայն բանջար կամ լոկ թարխանայ. իսկ շաբաթ եւ 60

15 շուրջառ... շապիկք: — 18 պատրիարքն: — 22 տա: — 30 շաղաչքն: — 47 ջաղջպանք: — 56 աննէին:

կիրակէն պանիր, մածուն, ձու, դէյթուն, երբեմն եւ ձուկ: Եւ զգետս նոցա շալ:

Եւ զամէն ուխտաւորս Պարոնտէրն իրեք օր պիտոր կերակրէ, թէ եւ հազար հողի է:

65 Եւ տան առաջի օրն երկու-երկու կերոն ուխտաւորաց՝ մինն սուրբ Յակոբ թողուս եւ մին Յարութիւնն տանիս. եւ ատաթ է որ առած օրն պիտի տայ: Ամէն մարդ հալին կորայ մի զուռուչ կամ երկու, այլ երկու-իրեք ալ կուտան:

70 Եւ յետ իրեք աւուր դարպախի հախ ժողովն. մարդու կորայ՝ Եպիսկոպոսաց, վարդապետաց, մեծատանց շատ, աղքատն սակաւ. շատն՝ շատ, քիչն՝ քիչ. մուրացիկքն պիլա պիտի տան, ոչ թէ կարգաւորքն: Ապա ուղեն ուլ ինչ խոտացել է կամ ուխտ է արել, թէ քառասնից, թէ ժամուց, եթէ հոգոյ բաժին, թէ մատաղի, թէ խաչի, թէ շուրջառի, եւ թէ այլ ինչ իրաց, անդ պիտի տրվի:

Իսկ ինձ կայր սիրելի եւ ծանօթ մի Եպիսկոպոս՝ Ղուկաս անուն. սա եւ ի Լէհ երեկ հետ ինձ նուիրակ¹. Ես նորա բազում գործս եւ բան կատարեցի Ստամպուլ. այլ եւ գիրս յուր գրեցի նմա եւ զայլ սպասաւորութիւնս նորա առնէի: Նա տեսեալ զիս յոյժ ուրախ եղեւ եւ ծանոյց զիս առաջնորդին. քանզի սա տեսուչ եւ վերակացու էր, այլ եւ յաջորդ պարոնտէրին. եւ զնա առաւել սիրէր քան զամենայն: Սա էած զիս օր մի առ նայ. եւ անկեալ յոտս նորա՝ ետու զհոգեբաժինս իմ. եւ նա առեալ օրհնեաց զիս եւ ասէ. «Այլ պիտոր աւելի տայիր, զու Լէհցի ես. ապա Ղուկաս Եպիսկոպոսն գոհ է քէնէ. բազում աշխատանք եւ խոփէթ արել ես վասն սուրբ Երուսաղեմայ»: Եւ ես ասի. «Լէհու վաղ եմ ելել. որք մի եմ եւ յաղքատ ծնողաց. այս չափս ալ իմ ձեռացս էմակն է. ընկալ զսակաւս յինէն»: Եւ նա հրամայեաց տալ ինձ օտա մի առանձին. եւ ասէ. «Որչափ ես աստ՝ ի սեղանէ իմէ կերիցես. բայց ինձ գրեցես, զոր ինչ պատվիրեցից»: Եւ ես համբուրեցի զաջն եւ զնացի: Եւ առաքեաց ինձ թուղթ եւ թանաք. եւ սկսայ գրել շրջաբերականս, զոր ամէն աշխարհ կ'առաքէր նուիրակ եւ թղթեր եկեղեցեաց եւ որիչ որիչ առաջնորդաց եւ խոճայից եւ աւագ իրիցանց: Իսկ Ղուկաս Եպիսկոպոսն զօտաս լի առնէր ամենայն բարօք եւ փափուկ կերակրովք, ազգի ազգի ընծայիւք, միտիթա-

րութեամբ եւ բազում բարերարութեամբ: Այլ եւ ամենայն միաբանք վանացն սիրէին զիս եւ պատվէին առաւել քան զչափն, որում արժանի չէի. որոց Տէրն վարձահատոյց լիցի: Եւ կացի անդ վարապայ Սաչէն մինչեւ ի Զատիկն Հայոց. գրէի, այլ եւ յեկեղեցոջն սպասաւորէի ընդ այլ սարկաւազան:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՅ

Եւ յետ աւուրց ինչ տեղացի վարդապետն ժողովէ զամենայն ուխտաւորս եւ առեալ տանի շուր ամէ ամենայն աստուածակոխ սուրբ Տնօրինականս, որպէս գրած է ի ցուցակն: Եւ ամէն տեղ շարական ասի. եւ քարոզէ ասուրով, պատմելով, զամենայն տեղիս նոցա յայտնելով, թէ այս այն տեղն է եւ այն՝ այս. ապա յորդորէ եւ ասէ. «Հազար երանի ձեզ եւ ձեր աչացն, որ արժանի եղաք տեսանել զայս սուրբ տեղիքս. թէպէտ երկարութիւն ճանապարհին եւ նեղութիւն, վիշտ եւ չարչարանք կրեցիք, այլ եւ ընչից, ապրանաց եւ փողոց զրկեցայք վասն սիրոյ սուրբ Երուսաղեմայ. ապա բազում բարեաց եւ պարգեաց արժանաւորեցայք»: Եւ այլ բանս յուր խօսի ի գրոց. եւ երկրպագեալ աղօթիւք դառնան յայլ տեղ. եւ այսպէս մինչ իրիկուն շրջին ամենայն ուխտատեղս եւ զնան ի տուն:

Ապա միաբանեալ աղաչեն զառաջնորդն, որ բանալ տայ զՅարութեան դուռն, զի միշտ փակման է՝ կպղած եւ մօհրած. բայց միայն ծակ մի կայ թողած, ուստի լուսարանուն տան կերակուր: Զի ամենայն ազգաց լուսարա կայ անդ. որ ամէն աւելին, սրբեն, մաքրեն, կանթեղս լուցանեն, խուսկ ծխեն եւ պատարազեն: Եւ կայր Հայոց լուսարա մի սուրբ եւ առաքինի, ճգնաւոր եւ պահեցող, որ միայն մորթն մնացեալ ընդ ոսկրաւ եւ ամենայն մարմինն ցամաքեալ. եւ ասին ժԲ տարի է քանի որ մտել է Յարութիւնն. վա՛յ ինձ մեղաւորիս: Եւ Պարոնտէրն առաքէ շխտերուն մեծն, զի աւելի քան հազար չէի կայ Սողոմոնի տաճարն: Եւ նա առնու զմօհրն. եւ զատին զբանալին. եւ գան հետ սուպաչուն եւ պարոնին քեհին. նստին սուրբ Յարութեան դուռն. գայ եւ մեր առաջնորդն եւ նստի հաւասար նոցա. զան եւ թարծիմանք. զի ամէն ազգ թարծիման մի ունի. բայց մերն գլուխ է: Յայնժամ Ստամպուլի չէր, մեծ եւ անվանի, հռչակեալ

110 յորում: — 20 տա: — 22 կա: — 24 անդր: — 30 արութիւնն: — 33 նայ: — 35 գա: — 38 այնժամ:

40 Եւ համբաւեալ յազգս ամենայն. եւ ինձ ամ էր որ նա էր թարծիման. ունէր նա չորս չափուչ, զոր առաքէր յԱմիթ, Հալապ, Մսր, Ստամպուլ եւ յո՛ր եւ կամէր. եւ ինքն չհեռանար յԵրուսաղէմայ. զի էր ճարտարախօս եւ բանաստեղծ: Եւ առնուին մարդազուլիս, այլ եւ կանանց՝ չորս երեսօք ոսկի, իրիցնուն երկու. հարեզայից, Եպիսկոպոսաց, վարդապետաց եւ կնիզվորաց եւ ոչ փող մի. իսկ Ֆրանկէն ինն ոսկի կ'առնուն. նա եւ Լէհցոց, թէ նոքա րայա չեն. եւ այսպէս ամէնքն տան եւ անուն թէպէրայ՝ որպէս խարածոցն: Ապա որչափ բացվի դուռն՝ համարձակ մտնեն ցուցանելով զթէսքերան. եւ ուլ չունենայ՝ չեն թողուլ: Եւ զի ամէն հեղ ոչ բանան, այլ զատկին տօնին կամ շատ ուխտաւորք գան՝ ապա բանան. հինգ-վեց հոգոյ չի բանան: Եւ տվեալ խարուճուն մէկ մէկ բարա՝ մտաք ի ներս: Եւ առաջնորդն սգեստաւորեցաւ եւ ընդ նմա որչափ կարգաւորք կան, նա եւ մոնո-գոնք, սարկաւազք եւ կղերիկոսք. եւ լուցեալ Զահս, լապտերս, խաչիւ եւ խաչալամով եւ բուռվարով եւ ամենայն զարդիւք, ճնճօք եւ կոնիակովք շրջեցաք զսուրբ Տնօրինականս, որ են ի մէջ Յարութեան. եւ ամէնին վրայ մատուռ մի է շինած: Եւ կայ ժԲ մատուռ ժԲ ազգի. եւ յորս մտանէին՝ նախ շարական ասէին. իսկ թէ տնօրինականքն ո՞րք են կամ ի՞նչ տեղ կամ որո՞ց ձեռք, զայն չէ պարտ երկրորդել, զի կայ հաւաքած եւ զբաժն բազում աշխատութեամբ, որ կոչի Տնօրինականք. գիտ եւ կարգա:

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ

Բայց ես զայն ծանուցից ձեզ՝ զկարգաց, զչինութեանց եւ զեկեղեցականաց, եւ զպայծառութիւնն, զոր ինչ լուայ եւ զոր ինչ տեսի՝ պատմեմ ձեզ:

Եւ ի մէջ Յարութեանն է Սուպա մի փոքրիկ որպէս մատուռ. զի Յարութիւնն մեծ է քան զԱյա Սօֆիայ. եւ ի գլուխն արծիճ. եւ ասին թէ յառաջն ոսկի էր, բայց անօրէնքն առել են ի վրայէն. եւ մտաք ի ներս ուր սուրբ եւ կենսարուխ զերեզմանն է Յիսուսի Բրիտտոսի. եւ կային կախ ժԲ կանթեղք մեծա-մեծք արծիճ. որ եւ ան կարաւ զմեզ. եւ անկեալ ի վերայ երեսաց մերոց լալով եւ խնդա-լով. զի առաւել խնդութեանցն հետեւի ար-

43 ո՛ր եւ: — 60 սարկաւազ: — 66 որս: — 67 ասէն: — 69 կա: — 71 կարգաց: — 73 զչինութեան: — 76 արութեան:

տօսր. եւ երկրպագելոյ եւ համբուրելոյ ոչ զաղարէաք. զի քաղցրացան շրթունք մեր քան զմեզր ի համեղ եւ յախորժ յանգին ճուհարէաք եւ ըզձայաք եւ սիրովն ոչ յազէաք. որ ցանկալի է եւ պատվական քան զոսկի եւ զականս պատվականս. եւ չկայ աշխարհ ինչ որ արժէ զնա, զի կեանք է ամենեցուն սուրբ Գերեզման Փրկչին. մինչեւ ոմանց թմբիլ եւ զմայլիլ ազնիւ հոտոյն. որպէս երբեմն ի վեր-նատուն դասք առաքելոց: Եւ այնպէս ցան-նապաղ ծառայել եւ սպասաւորել, որպէս ի լիսն թափօր այլակերպութեան օրն ոչ կա-մէին (առաքեալքն) մեկնիլ, այլ աղաչէին զՏէրն ասելով. Արասցուք երիտ տաղաւարս. նոյնպէս եւ աստ մտեալքն այլ ոչ կամէին ի դուրս գնալ: Իսկ բազմամբոխ ժողովուրդն որ կային եւ սպասէին մեծաւ բազմամբ եւ ըզմիւ՝ որպէս փեսայ հարսին, եւ կամ ոք սիրեցեալ հեռաւորին: Եւ տեսեալ զյամբն մեր անդր՝ մտեալ ի ներս քարչէին ի դուրս մինչ զի զօճիս եւ զթեզանիս պատուէին եւ զմօրուս ճողէին եւ զերեսս վերաւորէին. եւ ոչ կարէին շարժել. զի բոլոր անձամբ անկեալ ջերմ եւ անյազ սիրով՝ կախեալ երկուսին ձեռք զկենսարուխ սուրբ զերեզմանն, որպէս ոք ծարաւի եւ պասքեալ յաղբերս ջուրց, կամ սովալուկ ոք հաց գտեալ: Իսկ որք մեծ սէր եւ փափազ ունէին՝ աղաղակէին. Աստ բնակեցայց, աստ կեցից եւ աստի ոչ մեկնեցայց մինչեւ ի մահ: Ապա գան եասախչիւք եւ հարգանօք հաղիւ հանեն ի դուրս հարկանելով. ասեն. Ելէք ի դուրս, զի եւ այլք մասնակից լիցին, զի վասն ամենեցուն է նա եւ ոչ ձեզ միայն: Եւ աղօթեալ մեղաց թաղութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ծնողաց եւ երախտաւորաց եւ ամենայն քրիստոնէից: Եւ լալով գոտալով մեկնեցաք ի սուրբ զերեզմանն՝ որպէս գառն մաքեաց: Եւ զկնի մեր մտանէին այլք, զաս դաս: Եւ մատուռն փոքր էր, տանս հողի հաղիւ մէկնէր:

ԳՈՂԳՈԹԱ. ԳԵԹՍԵՄԱՆԻ

Եւ անտի ելաք ի Գողգոթայ լեառն, որ է ժԵ աստիճան. եւ հուպ նմին Վերնա-տունն մեր, ուր մեր խորան եւ սեղանն է:

88 զմեղի: — 90 յղձայաք: — 97 վարքն: — 107 զամեկն: — 112 յանաղ:

73 մուրացիքն: — 77 շուրջառի: — 78 անտ: — 83 ուրով: — 89 ոտս: — 95 աղքատ: — 99 ինձ:

¹ Այսինքն 1618ին:

